Սիպիլ

Երկինք

Երկինք անբավ, ո՛վ էութիւն վեհ, անճառ,
Գաղտնիք անհաս, տեսիլ վրսեմ, սուրբ տաճար,
Այն խորհուրդն ես դուն, զոր հոգիս դեռ մատաղ՝
Միշտ կը պաշտեր թե՛ ալեկոծ, թե՛ խաղաղ։
Դուն այն առանցքն ես, որուն շուրջ վազվզուն՝
Կը թևերին իմ ցընորքներս օդասուն,
Եվ գրեմբեթիդ վերև պայծառ ու շքեղ
Կը ժպտեր ինձ լույսերու բույլ մը բյուրեղ։
Անուշ պատկերդ ու դեմքդ աղվոր լուսավառ
Ճառագայթներ կուտար սրրտիս իմ խավար,
Ինչպես արփվույն լուսաճաճանչ կարմիր շող
Կը փարատև հոծ ամպերուն սև ամբոխ,
Որոնց ծոցեն խիտ-խիտ շանթեր ու փայլակ
Կը խոյանան ժայթքելով թոն ու կայլակ։
Ավա՜ղ, երբեք իմ ըղձանքիս չեղար խուլ։
Օրորեցիր միշտ հույսերով զիս խարխուլ,
Արծարծելու համար տենչերս ու երազ,
Ինչպես կին մը որ պըչրի հեղանազ,
Միշտ ցույց տալով նոր հրմայքներ ու հրապույր,
Դուն գերեցիր նույնիսկ միտքերն անհամբույր։
Ո՜հ, ի՞նչ ես դուն, ծո՛վ անմատույց ու խորին,
Ո՞ւր է արդյոք ըսկիզբդ ու ծայրըդ քուկին.
Էա՞կ մըն ես արդյոք կամ սին պատկեր,

Պատրա՞նք վաղանց, ինչպես բոլոր վայելքներ:
Միթե սուտ չէ՞ ինչ որ խորհուրդ կը կոչեն.
Բոլոր բույրերն ու սերերը պատրանք չե՞ն:
Եվ մեր սիրտը՝ հիմար մեղու, հեք մանկիկ,

Ծաղիկներու շուրջ կը հածի թափառիկ,
Կամ լուսատարփ օդապլացիկ խոլ թիթեռ՝
Միշտ կը զոհվի բոցին, որ զինք կը դյութեր:
Իսկ թե էակ ես կամ ոգի, ո՛վ երկինք,
Ունիս անշուշտ կիրքեր որով կը մրրկինք,
Գիտես ինչպես մութին մեջ խեղճ միջատներ
Կը փափաքին թեել մինչև գագաթներ,
Գիտես ինչպես կ՝անձկան քեզի հասնելու,
Թեև խոնարհ, թեև կամքիդ միշտ հլու:
Թե լուսեղեն էակներու սիրույն լոկ
Բաց են սրրտիդ դրռներն ամուր անողոք,
Եվ մեր աղոթքն ու պաղատանք եթե պիղծ
Քեզ կը թվին, նախ փարատե՛ մեր թախիծ,
Եվ հետո տե՛ս թե լուսինդ ալ աղվոր
Չե՞ն շողշողար մեր ճակատներ սրգավոր:
Այլ... կը ճանչնա՞ս ըզմեզ արդյոք, թե դուն ալ
Բուռըն տենչով կ՝ըղձաս մեզի մոտենալ,
Եվ օրենքին անաչառ ձեռքին երկաթե
Ըզքեզ ամուր ցանցերու մեջ կը պատե,
Կը ճանչնա՞ս զիս, թե կ՝երևամ քեզ անշունչ,
Ինչպես շյուղերն ու ցորեններն ոսկեձունջ,
Որոնց շրյուղերնն ու ձայներուն նուրբ սարսուռ
Մեզի համար հավերժություն մրն են լուռ:
Այս խոհն, ավա՜ղ, կը մթագնե կայծն հոգվույս,
Կ՝ուզեմ ըլլալ ես քու քերթվածդ արշալույս,
Կ՝ուզեմ կյաքիս բոլոր ժամերն ու վայրկյան
Քու ձեռքովդ իսկ կազմեմ անհուն, սուրբ մատյան,
Ուր տենչանքներս քեզի համար վառվառին,

Ինչպես խունկը ծոցն ոսկեշող բուրվառին:
Թո՛ղ, ո՛վ երկինք, թո՛ղ, կապուտա՜կ դուն կամար,
Ըղքեղ հոգույս հուզված ձայնով կոչեմ մայր,
Եվ լուսնակդ ալ քույր մ՚ըլլա ինձ կարեկից,
Որուն պատմեմ բոլոր հոգերս ու կրսկիծ:
Թո՛ղ որ նայիմ աղվոր դեմքիդ հրաշափառ,
Եվ հիացման խոր ըզգացմամբն անբարբառ

Ծունգի գալով աղաչեմ քեզ որ պարգես
Խորհուրդներուդ անհաս, անբավ ասպարեզ:
Եթե ժըպիրի զիս համարիս սակայն միշտ,
Բաղձանքս եթե քեզ երևա ամբարիշտ.
Հիշե՛ թե դուն մայր եղար ինձ, և թե դուն
Ըստեղծեցիր այս գրձուձ կավն եռանդուն:
Ի՜նչ մեծ իղձեր տրվիր նյութին այս չընչին
Որ անոնցմով եղավ Էակն առաջին.
Դուն ես որ միտքս անդադար քեզ կը ձրգես,
Մարդն անդունդին հրրայրք չուներ առանց քեզ:
Ծովուն ալքը, ծրմակին մեջ, վիհին խոր
Ժայռին ծայրն իսկ կը հետևիս դուն անոր:
Անպարագիր տեսարանեդ ազդրված,
Ան ալ կ՚ըղձա անհուն ըլլալ, ո՜վ Աստված,
Եվ հանցա՞նք է միթե սուրալ ամպին հետ,
Թրոչիլ մինչև արևներուն արահետ,
Խրնդրելու թև հրեշտակներեն, այգին հուր,
Ոգրներեն գոնե բառ մը հեշտալուր,
Որուն ճաշակն երազներու մեջ անցավ՝
Իրեն ոսկի բաժակներով տրվեցավ:
Սակայն, եթե մեր աշխարհին չես դուն տեր
Ու շանթարձակ ամպերեդ վար չես իջներ,
Թե չես տեսներ մեր կիրքերուն խոլ ալիք,
Թե մեր տենչեր քեզ կ՚երևան խաղալիք.
Փրշրե՛, ապա, մեր ըղձանքին խոլ թևեր,

Դեմքիդ վրրա ձրգե քողեր ու ըստվեր,
Եվ աշխարհի ցած իրարուն մեջ ևեթ
Թող ցընորքներս, տենչ ու հոգիս թաղվին գեթ,
Իսկ դուն, երկի՛նք, տարրերու մեջ անրզգա,
Իշխե՛ հավետ, ուր ո՛չ քրնար, ո՛չ սիրտ կա:

1885